ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 Սեպտեմբերի 2017թ. N 19

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՏԱՓԻ» ՓՈՂՈՑՈՒՄ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գեղարքունիք համայնքի «Գետափի» փողոցի բնակիչների դժգոհությունը՝ փողոցը գազաֆիկացում չունենալու վերաբերյալ, ղեկավարվելով Գեղարքունիք համայնքի ավագանու 21.12.2015թ.ի թիվ 33ա որոշմամբ հաստատված՝ ՀՀ օրենսդրությամբ Գեղարքունիք համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգով, համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Համաձայնություն տալ Գեղարքունիք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Գեղարքունիք համայնքի «Գետափի» փ. Գազատարի կառուցման աշխատանքները կատարելու համար տրամադրել 1870,0 հազար դրամ՝ այն ընդգրկելով Գեղարքունիք համայնքի 2018թ,-ի տարեկան բյուջեում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով
Ավագանի՝

20.09.2017

X

Գեղարքունիքի գյուղապետ Կ. Ասատրյան

Կ.Տ